ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

ԿՈՆԴԱԿ

ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԻՑ ՊԱՇՏՕՆԻ ԵՒ ՊԱՐՏՈՒՑ ՀԱՄԱՐ.

Խմբագրութիւնս իւր խոստման համաձայն ահա հրատարակում է Ազգիս Վեհափառ Հայրապետի Ս. Սինոդին ուղղած պաշտելի կոնդակը եւ Աւագ Քահանայից պարտուց եւ պաշտամանց վերաբերեալ հրահանգները.

«Յորէ գահակալութեան մերոյ տեսանելով զինչ
«ինչ զեղծմունս և զնորամուտ սովորութիւնս ներ-
«մուծեալս յօտարաց յեկեղեցին մեր իբր ի միոյ դարէ
«հետէ՝ ջանացաք զնորամուտն բառնալ իսպառ, իսկ
«զնախնական և զազգային բարեկարգութիւնս խա-
«փանեալս անդրէն վերանորոգել: Մին ի բարեկարգու-
«թեանց եկեղեցւոյ է պաշտօն և պարտաւորութիւն
«Աւագ քահանայից, զորմէ յառաջ քան իբր զվեց
«ամ ըստ հետեւեալ Հրահանգաց կանոնաւորեալ եւ
«յանձնեալ էաք Գաբրիէլ Արքեպիսկոպոսի Այվա-
«զեան, յետ տալոյ նմա զառաջնորդականն պաշտօն
«վիճակին Վրաստանու և Իմէրէթի՝ գործադրել
«զայնս ի նոյն վիճակին, և որչափ կարելին էր՝ յիւ-
«րում կենդանութեան ի գործ եդ, բայց այժմ պատ-
«շաճ դատիմք առաջադրել Սինոդիդ և հրամայեմք
«հրամանագրել ոչ միայն Տփխեաց՝ այլ և ամենայն
«վիճակաց, Թեմական Ատենից և Հոգևոր կառավա-
«րութեանց անշուշտ գործադրել զայսոսիկ Հրահանգս
«վերաբերեալս պաշտամանց և պարտաւորութեանց
«Աւագ քահանայից, զորոց պատճէնն առաքեմք Դմին
«պատուիրելով և տպագրել առ ի տալ իւրաքանչիւ

«Աւագ երեցանց զմի մի օրինակ ի ձեռն թեմական
«Ատենից, որոց և պատուիրել աջալրջութեամբ հսկել
«անշուշտ ի գործադրութիւն վասն պայծառութեան
«և բարեկարգութեան Հայաստանեայց սրբոյ առա-
«քելական եկեղեցւոյ մերոյ և ի փառս։

ՀՐԱՀԱՆԳ

ՎԱՍՆ ԱՒԱԳ ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՊԱՐՏՈՒՑ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿՈՉԱՆ.

Ա. Աւագ քահանայ կամ աւագերէց ըստ վաղեմի կարգաց Հայաստանեայց եկեղեցւոյ՝ կարգի հրամանաւ Վեհափառ Կաթուղիկոսի ամենայն Հայոց իբրև ի դիմաց Առաջնորդի հսկող ի վերայ բարեկարգութեանց եկեղեցւոյն առ հասարակ, որպէս և ի վերայ գնացից այլոց քահանայից և պաշտօնէից նոյն եկեղեցւոյ, յորում և ինքն վարէ զպաշտօն քահանայութեան։

Բ. Աւագ քահանայութիւն ոչ է իբրև ԿԻՐՈՍ կամ լոկ ԳՈՒՆ ըստ թիւր կարծեաց ոմանց ուսելոց յօտարամուտ սովորութենէ, այլ ՀՐՈՒՆՔՐՆԻՆ ԳՈՒՇԻՆ եկեղեցւոյ (1)։

Գ. Աւագ քահանայն իշխէ միմիայն եկեղեցւոյ իւրում՝ յորում ինքն վարէ զպաշտօն, իսկ ի քաղաքս և ի վիճակս՝ յորս ըստ բազմութեան եկեղեցեաց բազմաթիւ իցեն և Աւագ քահանայք կամ Աւագերէցք՝ մարմ. է և առանձին կառավարիչս կարգել ՓՈՐՁԻԼ անուամբ՝ տալով նմա զամն աշխարհական ՓԱՆՈՒՄ անուամբ՝ որպէս սահմանեալ ելիք կանխաւ։

Դ. Աւագ քահանային պարտք են միտ դնել՝ զի մի ինչ դատանիցի յեկեղեցւոջ իւրում թերութիւն կամ հակառակ ինչ Ծիսից և Աւանդութեանց Հայաստանեայց եկեղեցւոյ ըստ ամենայն հանդամանաց՝ զի սպասք և տնօթք և հանդերձք եկեղեցականք իցեն ի մաքրութեան և ի բարեկարգութեան՝ զի անթերի դատանիցին յեկեղեցւոջ ամենայն ինչ՝ որ պիտոյ իցէ ի կատարումն Ս. խորհրդոց՝ Մկրտութեան՝ Դրոշմի և Հաղորդութեան՝ այլ և Գրեանն կարգեալ ի կատարումն Աստուածային պաշտամանց՝ որպիսի են Աւետարան՝ Ճաշոց՝ Խորհրդատետր Սրբոյ Պատարագի՝ Տօնացոյց՝ Ժամագիրք Առենի՝ Սաղմոս՝ Մայր Մաշտոց՝ փոքր Մաշտոց՝ Շարական՝ Տաղարան և այլն այսպիսի մատեանք՝ և զի պատուհանք և լուսամուտք եկե-

---

(1) Պաշտօն Աւագ քահանայութեան համարօր է պաշտաման Благочинный անուանեալ քահանայից Ռուսաց՝ զորոց զկոչումն թարգմանեալ են մերազնեայք Ռուսաստանի ազգաւոր բարեկարգիչ կամ բարեկարգ։

զեկեղեցւոյն ունիցին վանդակս երկաթիս և փականք դրանց իցեն ամրապինդք, և առ եկեղեցեաւն գտանիցի միշտ գիշերապահ ոք ի պաշտպանութիւն։

Ե. Եթէ եկեղեցին պէտս ունիցի նորոգութեան, Աւագ քահանայն պարտ է ազդ առնել զայնմանէ երեցփոխանին և յորդորել զժողովուրդն՝ զի փոյթ կալցին նորոգութեան և միանգամայն ծանուցանել զայնմանէ Առաջնորդին։ Եթէ ժողովուրդն առ չքաւորութեան անկարող գտանիցի նորոգել զշինուած եկեղեցին կամ լնուլ զկարօտութիւն նորին ի զգեստս կամ ի սպասս անօթոց, Աւագ քահանայն հանդերձ երեցփոխանաւն և հաշուեհատիւք հայցէ յԱռաջնորդէն զժապաւինեալ Մատեան (Տումար) վասն հաւաքելոյ տուրս կամաւորս ի բարեպաշտից, այլ և միտ դնէ զի զդրամքն հաւաքեալք մնասցեն ի հաշուեմատեանս մտից և ծախուց, և ի գործ դիցին յայն դէպս միայն, յոր և կարգեալ են, և յաւարտ հաւաքեալ դրամոցն կամ ժամանակին սահմանելոյ առ այն, մատուսցէ զմատեանն Թեմական Ատենին հանդերձ տեղեկագրաւ։

Զ. Ցորժամ տացի հրաման կառուցանելոյ ուրեք զեկեղեցի, Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի շինութիւն եկեղեցւոյն լիցի ըստ ձևոյ Հայաստանեայց եկեղեցւոյ և ըստ վայելչութեան, եւ ըստ կարի անյապաղ և անընդհատ շինութեամբ, և եթէ յանկարծ դադարիցի շինուածն, ծանուցանել զայնմանէ Առաջնորդին։

Է. Աւագ քահանայն պարտի միտ դնել և ուշի ուշով նկատել և հսկել՝ զի քահանայք և սարկաւագունք և դպիրք եկեղեցւոյ իւրոյ յամենայն աւուրս անխափան գտանիցին ի սուրբ եկեղեցւոջ, յառաւօտու և յերեկոյ և կատարեսցեն անթերի զպաշտամունս իւրեանց, և ունիցին վարս պարկեշտս և խաղաղասէրս վայելուչս աստիճանի իւրեանց, և մի՛ երբէք հակառակ սուրբ կոչման իւրեանց պարապեսցեն ի խաղս զանազանս, այլ կեցցեն զգաստութեամբ և ամենայն զգուշութեամբ որպէս վայել է պաշտօնէից սրբոյ Սեղանոյն։ Իսկ եթէ տեսանիցէ զոք թերացեալ յայսպիսի պարտուց՝ նախ ինքն խրատեսցէ երկիցս և յանուղղայ գտանիլն փութասցէ ծանուցանել Թեմական Ատենին կամ Առաջնորդին առ ի զգաստացուցանել զնա։

Ը. Աւագ քահանայն պարտի փոյթ ունել՝ զի ամենայն բարեպաշտ ժողովրդականք կատարեսցեն անթերի զհոգևոր պարտս իւրեանց հաղորդելով կենարար Մարմնոյ և Արեան Տեառն յերիս նուագս ի տարւոջ, այսինքն ի սուրբ Զատկին, ի սուրբ Ծննդեան կամ Աստուածայայտնութեան Տեառն և ի Վերափոխման Տօնի Սրբուհւոյ Աստուածածնի։

Թ. Աւագ քահանայն պարտի ուսուցանել ժողովրդեանն՝ զի առ հասարակ արք և կանայք յառաջ քան զերկուս եօթնեակս կամ զէթ զութն օր յառաջագոյն քան զհաղորդութիւնն խոստովանեսցին սեպհական խոստովանահօր իւրեանց և յաւուր հաղորդութեան ընկալցին զարձակումն ի խոստովանահօրէն և ապա հաղորդեսցին սուրբ Խորհրդոյն, բոլորովին հեռի կալով յօտարամուտ սովորութենէ, որ մուծեալ է յեկեղեցի մեր ի տեղիս տեղիս (հարիւր ամաւ կամ դոյզն ինչ աւելի ժամանակաւ) յա-

ռաջ — ի մի և ի նոյն աւուր խոստովանիլ և հաղորդիլ. Եւ ի մէջ մեծի պահոց մինչ ծածկեալ է սուրբ Սեղան պատարագի, չէ օրէն հաղորդիլ զժողովուրդն սուրբ Խորհրդոյն, այլ զկնի չորրորդ շաբաթու աղուհացից. եթէ պատահեսցի Տօն Աւետման. կարելի է, նոյնպէս և ի Տօնի Մտին ի վիրապըն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, յորում լինի ճաշ պատարագ, հաղորդեսցեն. նոյնպէս ի ծաղկազարդի և յԱւագ Հինգշաբաթու աւուրս, և ի Ճըրագալոյցի երեկոյեան, նոյնպէս և ի Զատկի աւուրն հաղորդեսցեն. իսկ մինչ ծածկեալ է Սեղանն Ս. Պատարագի հաղորդելն սուրբ Խորհրդոյն օտարոց է ներմուծեալ յեկեղեցի մեր, և միայն հիւանդաց և ընդերկար ճանապարհ գնացողաց է ներելի.

Ժ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի անպակաս կատարեսցեն յեկեղեցւոջ ժամասացութիւնք յառաւօտու և յերեկոյին և մատուսցի սուրբ Պատարագ յաւուրս շաբաթուց և կիւրակէից անխափան, նոյնպէս և յայլ տօնական աւուրս, որք խաչ նշանաւ նշանակեալ են յօրացոյցի մերում, և ամենայն կարգք Աստուածպաշտութեան կատարեսցին ջերմեռանդութեամբ առանց շտապելոյ կամ համառօտելոյ ինչ ի կարգադրելոցն, այլև չթողուլ փոփոխել զեղանակս երգեցողութեան ի սրբոց Հարց, որ ընկալեալ և սահմանեալ են ի մէնջ ըստ արհեստի Հայկական ձայնագրութեան, և մի՛ ինչ աւելի մաղթանս կամ աղօթս կամ երգեցողութիւնս նորանորս յաւելուլ ի ժամասացութիւնս.

ԺԱ. Եթէ ոք ի քահանայից կամ յայլոց պաշտօնէից եկեղեցւոյ կամ յաշխարհականաց իսկ գործիցէ չփոթս ինչ յեկեղեցւոջ կամ անկարգութիւնս՝ բանիւ կամ գործով, մինչև խափանել առ վայր մի կամ բոլորովին զկարգս Աստուածպաշտութեան կամ Ժամասացութեան, Աւագ քահանային պարտք են ծանուցանել զայն Առաջնորդին առանց յապաղանաց.

ԺԲ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի քահանայք և սարկաւագունք, որ ունիցին խէթ և հակառակութիւն ընդ միմեանս, մի՛ երբէք մատուսցեն զՊատարագն սուրբ, մինչև հաշտեսցին ընդ միմեանս. Աւագ քահանայն պարտի հաշտեցուցանել ընդ միմեանս և զթշնամացեալսն, և եթէ չյաջողեսցի յայսմ, ծանուսցէ Առաջնորդին.

ԺԳ. Աւագ քահանային պարտք են միտ դնել՝ զի Հաղորդութիւն սուրբ պատուով և զգուշութեամբ պահեսցի յԸնծայարանին ի մէջ արծաթի ոսկեզօծ մասնատփոյ. Այլ և պահանջել՝ զի քահանայք պատուով պահեսցեն առ իւրեանս, ի տանիլ հարկին զմասնատուփն սրբոյ Հաղորդութեան ի պէտս հիւանդաց և Հաղորդն կամ Սրբութիւնն, որ ի նմա, մի՛ յոյժ հընասցի, այլ նորոգեսցի ըստ կարի յաճախագոյնս.

ԺԴ. Աւագ քահանային պարտ է միտ դնել՝ զի փութով ի միջոցի ութն աւուր անխափան մկրտեսցին մանկունք նորածինք, և մկրտութիւնն անշուշտ կատարեսցի յեկեղեցւոջ, առ ընթեր ունելով իւրեանց ի պաշտամանն զսարկաւագունս և զդպիրս.

ԺԵ. Աւագ քահանայն պարտի զգոյշ լինել՝ զի մի՛ մեռեալք պահեսցին ի ժողովրդական եկեղեցին առաւել քան զերկուս ժամս, և յետ կատարելոյ զհանդուսեան պաշտօն ի վերայ մեռելոյն՝ տանել ի գերեզման և թաղել յետ անցանելոյ օրինադրեալն ժամուց, իսկ եթէ գտանիցի ի գերեզմանատան առանձին մատուռն վասն ննջեցելոց, ըստ հնագոյն սովորութեան Հայաստանեայց եկեղեցւոյ, անդ կարեն պահել զմեռեալս, որքան միջոց և կամիցին, բայց զգոյշ լինելով առողջապահական կանոնաց։

ԺԶ. Աւագ քահանայն պարտի զգոյշ լինել՝ զի մի՛ ոք ի քահանայից, ի սարկաւագաց կամ ի դպրաց եկեղեցւոյ իւրոյ աղտեղի կօշկոք կացցէ ի դասի, կամ առանց հանելոյ զկօշիկս և ագանելոյ զհողամոփս մաքուրս ելանիցէ ի բեմն։

ԺԷ. Զմոռուլ զի յեկեղեցիս մեր հնարեսցին թափօրք և հանդէսք նորանորք կամ շինեսցին խորանք և մատուռնք նորք հակառակ ձևոյ Հայաստանեայց եկեղեցւոյ։

ԺԸ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի ի Տօնս Սրբոյ Զատկի և Աստուածայայտնութեան քահանայք ըստ պատշաճի և վայելչապէս կատարեսցեն զանօրհնէս, նոյնպէս և զայլ այսպիսի արարողութիւնս առանց բնաւ տեղի տալոյ անկարգութեանց և արբեցութեանց։

ԺԹ. Աւագ քահանայն պարտի փոյթ յանձին ունիլ՝ յաւուրս կիւրակէից և Տօնից տալ ժողովրդեան խրատս հոգեշահս և առնել ծանուցմունս։ Նաև բառնալ զօտարամուտ սովորութիւն քահանայից ի խոստովանութեան պահու սառանալ դրամս ի խոստովանաւորդուց։

Ի. Աւագ քահանայն պարտի զգոյշ լինել՝ զի մի՛ քահանայք զրկեսցեն զսարկաւագունս և զդպիրս մի՛ բնաւ հարկանել զնոսա, իսկ եթէ յանցաւոր ինչ գտանիցին նոքա, պարտին քահանայք ազդ առնել Աւագ քահանային և եթէ շարունակեսցեն, յայտնել Առաջնորդին։

ԻԱ. Սարկաւագունք և դպիրք պարտին մեծարել զքահանայս իւրեանց և հնազանդել նոցա և ոչ երբէք անարգել զնոսին բանիւ կամ գործով. իսկ եթէ նեղիցին ի նոցանէ, յայտնեսցեն Աւագ քահանային, եթէ շարունակեսցեն և կամ յԱւագ քահանայէն իսկ նեղեսցին՝ բողոքեսցեն առ Առաջնորդն։

ԻԲ. Աւագ քահանայն պարտի զգուշացուցանել զքահանայս և զսարկաւագունս ի զօշաքաղութենէ, և մի՛ նեղեսցեն և զզուեցուսցեն զժողովուրդն պահանջմամբ առաւել քան զչափն արծաթոյ կամ այլ տրոց, և մի՛ սակարկեսցեն վասն կատարման Ս. Խորհրդոց, Մկրտութեան, Պսակի, Ս. Պատարագի և Թաղման և այլն։

ԻԳ. Զէ օրէն սարկաւագաց և քահանայից առանց հրամանի Աւագ քահանայի գնալ ուրեք հեռագոյն քան զվերստաս 25, և ոչ առ մի օր, իսկ ի հարկաւոր դէպս գիտութեամբ և հրամանաւ Աւագ քահանային կարեն գնալ և ի հեռաւոր տեղիս, բայց միայն յիւրեանց վիճակին, իսկ յայլ վիճակ ոչ բնաւ։

ԻԳ. Ի մեռանիլ քահանայի կամ սարկաւագի ուրուք, Աւագ քահանայն պարտի անյապաղ ծանուցանել թեմական Առենին, տալով տեղեկութիւն զմեռացելոց ընտանեաց նորին և մատուցանելով զթուղթս նորա պաշտօնական, միանգամայն և յօրինելով զցուցակ ստացուածոց մեռելոյն՝ առաջի առնել Թեմական Առենին։

ԻԵ. Աւագ քահանայն ի մեռանել ուրուք քահանայի եկեղեցւոյ իւրում անյապաղ գնալով առ ժողովուրդն նորա ստուգեսցէ զեկեղեցական ստացուածս և զգրուածս, որ գտանիցի առ նմա, յանձնէ նորումն քահանայի որ փոխանակիցէ զառաջինն և կամ ցնշանակել նորոյն, այլում ումեք ի քահանայից յանձնէ՝ յանդիման երեցփոխանին. զնոյն առնէ և ի դէպս հրաժարման կամ մահու երեցփոխանի ուրուք, և եթէ պակաս երևեսցի ինչ ի քննութեան, Աւագ քահանայն զգին կորուսեալոյ իրին և զանուն կորուսանողին ծանուցանէ Առաջնորդին։

ԻԶ. Աւագ քահանայն պարտի հսկել՝ զի քահանայքն և սարկաւագունք և դպիրք եկեղեցւոյ իւրոյ իցեն ի հանդերձս վայելուչս աստիճանի իւրեանց և մանաւանդ զվարկք նոցին միատարազ և բարեձև և զանազանեսցին յաշխարհական անձանց արտաքին եկեղեցական բարեվայելուչ զգեստուք։

ԻԷ. Աւագ քահանայն յընդունել իւրում ի Հոգևոր իշխանութենէ հրամանս և պատուէրս՝ քաջ խելամուտ լիցի իմաստից նոցին և ճշգիւ ի դէպ ժամու կատարումն տացէ նոցին, շայուելով յիւրմէ կողմանէ ի հրամանան զինքնակամ բացատրութիւնս և զերկրպագական եղրակացութիւնս. զտարակուսանս այլոց եկեղեցականաց ինքն լուծցէ, իսկ յորժամ և ինքն երկմտիցէ, խնդրեսցէ զլուծումն ի Թեմական Առենէն կամ յԱռաջնորդէն։

ԻԸ. Աւագ քահանայն պարտի զգոյշ լինել՝ զի մի շհաս և ապօրինի պսակ դիցեն քահանայքն եկեղեցւոյ իւրոյ, ինկատել զապօրինութիւն ինչ՝ իսկոյն պարտի արգելուլ և անյապաղ գրութեամբ յայտնել Առաջնորդին և Թեմական Առենին։

ԻԹ. Աւագ քահանայն պարտ է զգոյշ լինել՝ մի՛ բնաւ պսակ դնել եկեղոց յայլոց ծխոց, խստիւ արգելեալ է նաև յայնպիսի դէպս, յորս մին յեկեղոց յամուսնութիւն իցէ ի տեղական ժողովրդենէ և միւսն՝ յօտար քաղաքէ կամ ի գիւղէ, պարտի անպատճառ վաւերական վկայականս պահանջել յօտարականէն՝ հաստատեալ յԱռաջնորդէ վիճակին օտարականի, յոր վիճակաց և իցէ, թէ ի Ռուսաստանէ, թէ ի Տաճկաստանէ, թէ ի Պարսկաստանէ և յայլոց տեղեաց, ուղղակի գրել առ Առաջնորդն նոյն վիճակի և տեղեկութիւնս պահանջել ստորագրութեամբ Առաջնորդի իւրոյ քահանայի և համաքաղաքացւոյ, մի՛ իշխեսցեն պսակ դնել քահանայք, մինչև ստացին զյիշեալ վաւերական վկայականս ստորագրութեամբ քահանայի իւրոյ համաքաղաքացւոյ և ազգակցաց օտարականին՝ հաստատեալ յԱռաջնորդէ վիճակին։ Այսպիսի վկայական պահանջի նաև ի պա-

տանեկութենէ անոի պանդխտեալ յօտարականէն, զի մի՛ գուցէ արդէն ամուսնացեալ լիցի օտարականն և ամուսինն կենդանի լիցի։

Լ. Աւագ քահանայն պարտի փոյթ ունել՝ զի արձանագրական (մատրիքական) մատեանք ի դէպ ժամանակի պատրաստեալ տացին քահանայից եկեղեցւոյ իւրոյ անդէն ի սկզբան նորոյ տարւոյն։ Նա ինքն միտ դնէ, զի ուղղութեամբ և ի ժամու և միօրինակ եղիցին յամենայն մատեանս արձանագրութիւնք. երկիցս և երիցս ի տարւոջ ստուգեսցէ զիրան, իւրով ստորագրութեամբ վաւերացուցանելով զայնս։

ԼԱ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի անկորուստ պահիցին ի պահարանի եկեղեցւոյն ցուցակք անօթոց և սպասուց և ամենայն եկեղեցական իրաց։ Այլև զգուշութեամբ պահեսցին ամենայն հրամանագիրք պատշաճեալք եկեղեցւոյն, որպէս և արձանագրական մատեանք և հաշուեմատեանք ամացն անցելոց։ և այլն։

ԼԲ. Աւագ քահանայն պարտի միտ դնել՝ զի մի՛ քահանայք յափշտակեսցեն զվիմեանց ծուխս՝ կատարելով զպաշտամունս նոցա։

ԼԳ. Աւագ քահանայն պարտի միտ դնել աջալրջութեամբ՝ զի երեցփոխանք անպատճառ և ըստ օրինի գրեսցեն ի հաշուեմատեանս տուեալս նոցա ի Թեմական Առենէն զհաշիւ մտից և ելից։ և մի՛ ինչ ծախս երևելիս արասցեն առանց գիտութեան իւրոյ և առանց հաւանութեան ժողովրդականացն։

ԼԴ. Աւագ քահանայն պարտի հսկել, զի ի ծխական երկսեռ դպրոցս անպատճառ աւանդեսցեն զբբիստոնէական վարդապետութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ ի ձեռն հմուտ և ուղղափառ ուսուցչաց։ և աջակցել հոգաբարձութեան ի բարեկարգութիւն և ի յառաջադիմութիւն դպրոցացն։

ԼԵ. Աւագ քահանայն մի՛ իշխեսցէ թողուլ օտարական վարդապետաց և քահանայից փիլոն առնուլ յեկեղեցւոջ իւրում՝ մինչև չունիցին յանձնարարական գիր ի Սինոդէ Սրբոյ Էջմիածնի։